ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-175

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատու, Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

MARTIN MANUKYAN
Responsible for monitoring the work of the Office of the Public Defender of the Chamber of Advocates of the Republic of Armenia, Lecturer at the Department of Jurisprudence of the Yerevan University "Gladzor," Candidate of Legal Sciences

МАРТИН МАНУКЯН
Ответственный за мониторинг работы Аппарата Народного Защитника Палаты адвокатов Республики Армения, преподаватель кафедры юриспруденции Ереванского университета «Гладзор», кандидат юридических наук

ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ (մաս III)

THE PRACTICE OF DEVELOPMENT OF WESTERN EUROPEAN PARLIAMENTARISM (part III)

ПРАКТИКА РАЗВИТИЯ ЗАПАДНОЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТАРИЗМА (часть III)

Սկիզբը նախորդ համարում ….

Ներածություն

Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի զարգացման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ինստիտուտը չի կարող արդյունավետ գործել, եթե ձևավորված չեն սոցիալական կառուցվածքն ու քաղաքացիական հասարակությունը, որոնց բնորոշ է բնակ-

չության բարձր իրավաքաղաքական մշակույթը: Պառլամենտը խորհրդանշում և իրականացնում է ազգ-պետության, կամ որ նույնն է, ազգապետության քաղաքական ներկայացուցչությունը, ընդունում է պետության գլխի երդումը, ինքնիշխան ժողովրդի կողմից արտահայտում է վստահություն կառավարությանը, նրան հանձնում է լիազորություններ և այլն: Հենց ներկայացուցչական ու գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն են դրված հոդվածի սույն բաժնում ներկայացված՝ գերիշխող, ինքնավար, սահմանափակ իրավասությամբ, ինչպես նաև ենթակա պառլամենտների (խորհրդարանների) դասակարգման հիմքում:

Հիմնական հետազոտություն

Կառավարության խորհրդարանական պատասխանատվության ինստիտուտը գոյություն ունի բոլոր խորհրդարանական հանրապետություններում և սահմանադրական միապետություններում (թեև դեռևս 1900 թ. **Մեծ Բրիտանիայում**, **Իտալիայում, Ֆրանսիայում** ու **Շվեյցարիայում** գործող կառավարությունները ամբողջովին հաշվետու էին ժողովրդի կողմից ընտրված օրենսդիր մարմիններին): Դրանց տարբերիչ կարևոր առանձնահատկությունը կառավարության ձևավորումն է խորհրդարանական հենքի վրա և դրա ֆորմալ պատասխանատվությունը խորհրդարանի առջև: Խորհրդարանի և կառավարության փոխհարաբերությունների նմանօրինակ կարգը ձևավորվել է XVII-XVIII դդ. **Մեծ Բրիտանիայում**, իսկ 1725 թ. այն ամրագրվեց օրենքով՝ սահմանելով կառավարության պատասխանատվությունը խորհրդարանի առջև, սակայն, մինչև 1911 թ. խորհրդարանական բարեփոխումը ուժի մեջ մնաց օրենքները փոփոխելու կամ օրենսդրությունը խոչընդոտելու լորդերի պալատի իրավունքը: Հետագա տարիներին հաստատվեց նաև խորհրդարանական մեծամասնության վրա հենվող կուսակցական կառավարություն ձևավորելու կանոնը[1]: Մինչդեռ, խորհրդարանի առջև նախարարական պատասխանատվության վերջնական հաստատումն օրենսդիր իշխանությունը նախարարների նկատմամբ, որոնք իրենց պատասխանատու էին համարում առաջին հերթին միապետի առջև, կիրառվում էր իմպիչմենտ: Ճիշտ է՝ բրիտանական քաղաքական պատմությանը հայտնի է նման ընթացակարգ կիրառելու միայն երեք դեպք (1677, 1786, 1806 թթ.):

Կառավարության անդամներին նշանակում է պետության ղեկավարը, սակայն ոչ իր հայեցողությամբ, այլ կուսակցության (կուսակցությունների կոալիցիայի) անդամների թվից, որը տիրապետում է խորհրդարանում (դրա ստորին պալատում) տեղերի մեծամասնությանը: Խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելը հանգեցնում է կամ կառավարության հրաժարականին, կամ խորհրդարանի արձակմանը և վաղաժամկետ խորհրդարանական ընտրությունների անցկացմանը, կամ՝ թե՛ մեկին և թե՛ մյուսին: Ֆորմալ առումով այն հնարավորություն է ընձեռում ցրելու կամ փոխարինելու կառավարությունը, որի գործունեության ուղղվածությունը չի արժանանում իշխանության ներկայացուցչական մարմնի աջակցությանը: Սակայն գործնականում այդ ինստիտուտի գործարկումը խորհրդարանականների նախաձեռնությամբ ուղեկցվում է որոշ բարդությունների հաղթահարմամբ, բացի դրանից՝ խորհրդարանական ընդդիմության հնարավորություններն այնքան չնչին են, որ դրա գործունեությունը՝ որպես կառավարության նկատմամբ հսկողության միջոց, չափազանց փոքր է[2]: Բացի դրանից՝ կառավարությանն անվստահություն հայտնելը սովորաբար հիմք է խորհրդարանը (ստորին պալատը) վաղաժամկետ արձակելու և նոր ընտրություններ նշանա-

[1] *Крылова Н.С.,* Британский парламент// очерки парламентского права. М., 1993.
[2] *Баренбойм Н.Д.,* Вето президента США-Советское государство и право. Москва, 1977.

կելու համար, ինչը նույնպես, անկասկած, ազդում է խորհրդարանականների վարքագծի վրա:

Ընդդիմության առաջարկած պարսավանքի բանաձևը (անվստահության քվեն), որպես կանոն, հաջողության հնարավորություն չունի: Այսպես, **Մեծ Բրիտանիայում** Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միայն մեկ անգամ է Համայնքների պալատում կառավարությանն անվստահություն հայտնելու հարց բարձրացվել (1979թ), ընդ որում՝ ինչ-որ առումով պատահականորեն: Լեյբորիստ պատգամավորներից մեկը հիվանդացել է քվեարկությունից առաջ, որի հետևանքով ընդդիմությունը (պահպանողականները) մեկ ձայնի գերակշռություն էր ստացել: Եթե ձայները բաշխվեին հավասարաչափ, ապա վճռորոշ կդառնար խոսնակի ձայնը, և լեյբորիստները կշարունակեին մնալ իշխանության ղեկին, և չէին անցկացնի վաղաժամկետ ընտրություններ, որոնց ընթացքում հաղթեցին պահպանողականները և ղեկավարեցին մինչև 1997 թ. մայիսը[3]:

Ֆրանսիայի հինգերորդ հանրապետությունում միայն մեկ անգամ (1962 թ.) է ընդունվել անվստահության բանաձև, որը, սակայն, ոչ թե կառավարությունը փոխելուն, այլ Ազգային ժողովն արձակելուն:

Գերմանիայում կառուցողական անվստահության քվեն արդյունավետորեն կիրառվել է առաջին ու վերջին անգամ 1982 թվականին:

Միևնույն ժամանակ, խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչներից ձևավորվող կառավարությունը, վստահության քվե ստանալով, կուսակցական կարգապահության շնորհիվ՝ ուղղորդում է այդ մեծամասնության գործունեությունը և դրանով իսկ վերահսկողություն սահմանում ընդհանուր առմամբ խորհրդարանի վրա: Այսպիսով, կառավարությունը երկիրը կառավարող գլխավոր մարմինն է, իսկ կառավարության ղեկավարը փաստացի առաջին դեմքն է իշխանության կառուցվածքում ՝ երկրորդ պլան մղելով խորհրդարանն ու երկրի նախագահին[4]:

Անշուշտ, կառավարության ղեկավարի լիիշխանության աստիճանը կախված է երկրում և խորհրդարանում քաղաքական ուժերի կոնկրետ դասավորությունից, խորհրդարանի և կառավարության միջև հաստատված փոխհարաբերությունների ձևից և այլն: **Մեծ Բրիտանիայի** վարչապետը, որը խորհրդարանում իշխող մեծամասնության կուսակցության առաջնորդն է, տիրապետում է գործողությունների շատ ավելի մեծ ազատության, քան **Իտալիայի** նախարարների խորհրդի նախագահը, որը հարկադրված է հաշվի նստելու կուսակցության ներկայացուցիչների, իշխող կոալիցիայի գործընկերների տեսակետների հետ: Ուստի, հենց ներկայացուցչական ու գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն են դրված ստորև ներկայացվող խորհրդարանների դասակարգման հիմքում:

1. Գերիշխող խորհրդարաններ:

Նման խորհրդարաններն առաջատար դեր են խաղում քաղաքական կյանքում՝ ձևավորելով և խստիվ վերահսկելով գործադիր իշխանությանը: Այդ դեպքում անխուսափելի են դառնում հաճախակի կառավարական ճգնաժամերը: Առավել բարենպաստ պայմաններ գերիշխող խորհրդարանների գոյության համար ստեղծում է «ծայրահեղ» կամ «բևեռացված պլյուրալիզմի» համակարգը: Այդպիսի օրինակներ կարող են լինել Ֆրանսիայի երրորդ (1875-1940)

[3] Из истории европейского парламентаризма. Франция. Под ред. С.П. Пожарской. М., 1999.
[4] *Крутослов М.А., Ковлер. А.И.,* Парламентское право Франции, Очерки парламентского права, М., 1993.

և չորրորդ (1946-1993) հանրապետությունների ժամանակաշրջանների Ազգային ժողովները և **Իտալիայի** առաջին Հանրապետության խորհրդարանը (1947-1993թթ.):

Այսպես, **Ֆրանսիայում** չորրորդ հանրապետության գոյության 12 տարիներին փոփոխվել է 25 կառավարություն[5], ընդ որում՝ որոշ կառավարություններ աշխատել են ընդամենը մի քանի շաբաթ: Կառավարության թույլ ու անկայուն լինելը խորհրդարանի հետ հարաբերություններում «… հետևանք էր ոչ այնքան սահմանադրական նորմերի, որքան պրակտիկայի: Մասնավորապես, խորհրդարանն արձակելու իրավունքը չէր կիրառվում գործադիր իշխանության կողմից արձակման առաջին ու վերջին փորձի ձախողման պատճառով, որն իրականացրեց Երրորդ հանրապետության առաջին նախագահ Մակ-Մագոնը 1877 թվականին: Ճիշտ նույն կերպ Չորրորդ հանրապետության օրոք կառավարության ղեկավարները խորհրդարանին ենթարկվելու և պաշտոնաթող լինելու սովորություն ունեին: Խորհրդարանն արձակվեց միայն մեկ անգամ՝ 1955 թ.: Կառավարությունների թուլության ու անկայունության պատճառը (1875-1958թթ. ընկած ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ «Վիշիի ռեժիմի») մասամբ թույլ կուսակցական համակարգն էր, ինչպես նաև ֆրանսիական հասարակության վախը չափից դուրս ուժեղ գործադիր իշխանությունից, ինչը հիշեցնում էր ավտորիտար բոնապարտիստական ռեժիմները»[6]:

Հետպատերազմյան Իտալիայում (1947-1994 թթ.) նույնպես տեղի է ունեցել մեծ թվով կառավարության փոփոխություններ՝ ավելի քան 60 անգամ: Միաժամանակ, գործող խորհրդարանները, որպես կանոն, ընդունել են բազմաթիվ օրենքներ: Օրինակ՝ **Իտալիայի** խորհրդարանը վերջին կես դարում ընդունել է տարեկան շուրջ 330 օրենք: Սակայն դա չնպաստեց Իտալիայի քաղաքական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, և այդ օրենքների մեծ մասը ոչ էական կամ մասնակի բնույթի էին: Այսպիսով, թվում է՝ կարելի է միանշանակ եզրահանգում անել, որ խորհրդարանի այդ տիպը բնավ էլ ոչ ամենաօպտիմալն է, և վերջնարդյունքում դրա գոյությունը պայմանավորում է քաղաքական վարչակարգի անկայունության բարձր մակարդակը: Սակայն, Իտալիայի դեպքում, որտեղ բազմաթիվ արտաքին և ներքին պատճառներով «առաջացել էր խորը հասարակական պառակտում և ձևավորվել «կայուն անկայունության» համակարգ՝ իր գրեթե ամենամյա կառավարական ճգնաժամերով և, դրա հետ մեկտեղ, «անկատար երկկուսակցականությամբ», մեկ կուսակցության փաստացի տիրապետությամբ (ՔԴԿ), քաղաքական փոխատեղման (ռոտացիայի) արգելափակմամբ, այդ հայտնի երևույթներին, բացասական միտումներին հակակշիռ դարձավ խորհրդարանական համակարգը: Հենց դա դանդաղեցրեց իտալական քաղաքականության ճահճացումը, դարձավ հզոր գործոն, որը հնարավորություն տվեց հասարակության ու քաղաքական հանրույթի զգալի մասին ազդեցություն ունենալու գործադիր իշխանության իրական լծակների վրա: Կուսակցական համակարգի հետ մեկտեղ, որը նույնպես սերտորեն կապված է խորհրդարանական կյանքի հետ, այն օգնեց լայն զանգվածներին և հեռավոր մարգինալ տարածաշրջաններին՝ ներգրավվելու միասնական հասարակական օրգանիզմի մեջ, նրանց ինտեգրմանը իտալական ազգ-պետության համակարգին[7]:

2. Ինքնավար խորհրդարաններ

Նման խորհրդարանները հուսալիորեն վերահսկում են օրենսդրական գործընթացը, սակայն չունեն «ծանրակշիռ» լծակներ գործադիր իշխանությանը հեռացնելու համար: Այսպես,

[5] *Рокар М.,* Трудиться с душой, М., 1990.
[6] *Алмонд Г., Пауель Дж., Стром К., Далтон П.,* Сравнительная политология сегодня, Мировой обзор, М., 1995.
[7] *Холодковский К.Г.,* Парламент первой республики: Положитеельный и отрицательный опыт. М., 2004.

ԱՄՆ Կոնգրեսի ինքնավարությունն ապահովվում է ոչ միայն իշխանությունների տարանջատման խիստ համակարգով, որն էականորեն սահմանափակում է պետության ղեկավարի միջամտության հնարավորությունն իր գործերին, այլև մի շարք այլ հանգամանքներով: Նախ՝ ներխմբակցային խիստ կարգապահության բացակայությունը, Կոնգրեսի անդամները, նույնիսկ «նախագահական» կուսակցության խմբակցության կազմում գտնվողները, ոչ միշտ են պաշտպանում նախագահին քվեարկությունների ժամանակ: Երկրորդ՝ Կոնգրեսի ուժը շատ բանով պայմանավորված է ուժեղ կոմիտեների ու ենթակոմիտեների առկայությամբ, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են ներկայացուցչական ժողովի ակտիվ ու ինքնուրույն դերին՝ որոշումներ կայացնելիս և վերահսկողական լիազորություններ իրականացնելիս:

Ինքնավար խորհրդարան կարող է ձևավորվել նաև խորհրդարանական համակարգի պայմաններում՝ զարգացած բազմակուսակցության հետ համագործակցելիս: Այդպես տեղի ունեցավ, օրինակ, **սկանդինավյան երկրներում՝** հիմնական սոցիալ-քաղաքական խնդիրների վերաբերյալ միջխմբային խորհրդակցությունների անցկացման նրանց հաստատված սկզբունքներով: Նման բանակցությունների գլխավոր բեմահարթակներից մեկն էլ հենց դարձավ խորհրդարանը: «Պառլամենտարիզմի կոնսեսուալ մոդելը հիմնված է կուսակցությունների միջև իշխանությունը բաժանելու վրա, ինչը դրսևորվում է կառավարության կողմից տարբեր շահագրգիռ խմբերի պահանջները հաշվի առնելով խորհրդարանի հանձնաժողովներում փոխզիջումներ որոնելով, խորհրդարանի վրա ճնշում բանեցնելու գործելաոճից հրաժարվելով: Խորհրդարանի բուն խնդիրը սոցիալական համերաշխությունն ամրապնդելն է, այն պետք է ոչ թե օտարացնի միմյանցից քաղաքացիներին, այլ համախմբի նրանց, ինտեգրի փոքրամասնությանը համակարգին: Այսպես է դրսևորվում կոնսեսուալ պառլամենտարիզմի մոդելի ինտեգրատիվ բնույթը սկանդինավյան երկրներում՚՚ հիմնված «կուսակցություններ-խորհրդարան-կառավարություն» բանաձևի վրա»[8]:

3. Սահմանափակ ինքնավարությամբ խորհրդարանը

Այն կարելի է դիտարկել որպես կառավարության և ընդդիմության սուր մրցակցության հիմնական դաշտ: Այսպես, **Մեծ Բրիտանիայում** կառավարության վերահսկողությունը մեծամասնության միակուսակցական խմբակցության նկատմամբ չափազանց ուժեղացնում է նրա դիրքերը Համայնքների պալատում: Վերահսկողության գլխավոր մեխանիզմը կուսակցական խիստ կարգապահությունն է: **Սակայն կուսակցության կամքին դեմ քվեարկելը բրիտանական խորհրդարանում նշանակում է կատարել արարք, որը վերջ կդնի սեփական հաջող քաղաքական կարիերային:** Ահա թե ինչու է հեշտ կանխատեսել քվեարկության արդյունքները բրիտանական խորհրդարանում: Կարծիք է հնչում, որ ներկայում Համայնքների պալատը գործնականում դադարել է հաշվետվություն պահանջել գործադիր իշխանությունից: Խորհրդարանը սերտաճել է կառավարությանը և չունի հսկողական արդյունավետ մեխանիզմներ գործադիր իշխանության նկատմամբ: Ուստի Համայնքների պալատի դերը ոչ այնքան կառավարելն է, որքան կառավարությանը բանավոր և գրավոր հարցադրումներով ծանրաբեռնելը՝ քննարկելով և քննադատելով գործադիր իշխանության այս կամ այն օղակին: Հետազոտողները ենթադրում են, որ «կառավարությունն ընդդեմ ընդդիմության» համակարգը խոչընդոտում է նոր գաղափարների առաջացումն ու առաջմղումը, փոխարենը նպաստում

[8] *Кулакова Т.А.,* Теория самостоятельного мандата и принцип разделения властей на примере скандинавских стран // ПОЛИТЭКС. Политическая экспертиза. Альманах Вып, СПб, 2005.

է այն բանին, որ որոշումների մեծ մասն ընդունվում է խորհրդարանի դահլիճից դուրս՝ իշխող կուսակցության ներսում:

4. Ենթակա խորհրդարանը

Այս տիպի խորհրդարանը համատեղելի է լիբերալ ժողովրդավարության (**Ֆրանսիայի հինգերորդ Հանրապետություն**) և ավտորիտար կամ կիսաավտորիտար համակարգերի (**Ռուսաստանը, ԱՊՀ երկրների գերակշիռ մասը**) հետ:

Ֆրանսիայում խորհրդարանի լիազորությունները սահմանափակելու օգտին ինչող գլխավոր փաստարկը հիշողությունն է իշխանության կաթվածահար վիճակի մասին, որին հանգեցրել էր Չորրորդ հանրապետության իշխող խորհրդարանը: Այսպես, համաձայն Հինգերորդ հանրապետության սահմանադրության դրույթների, Ազգային ժողովը պահպանել է բացառիկ լիազորությունը միայն այն օրենքների նկատմամբ, որոնցով սահմանվում են քաղաքական իրավունքների իրականացումը, քաղաքացիական ու քրեական օրենսդրությունը, դատակազմությունը, հարկային համակարգը, ընտրակարգը, պետական ծառայողների կարգավիճակն ու, ազգայնացման հարցերը: Այնպիսի կարևորագույն բնագավառներում, ինչպիսին են պաշտպանությունը, տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների աղբյուրների կազմակերպումը, կրթությունը, աշխատանքի իրավունքը, արհմիությունների կարգավիճակը, Ազգային ժողովին վերապահված է լոկ սահմանելու «ընդհանուր սկզբունքները»: Մնացած բոլոր հարցերը պետք է լուծեր կառավարությունը՝ կարգադրիչ իշխանության կարգով: Մինչև 20-րդ դարի 80-ական թվականները **Ֆրանսիայի** Ազգային ժողովը դասվում էր ժողովրդավարական աշխարհի «ամենաթույլ» խորհրդարանների շարքին[9]: Իրավիճակը փոխվեց «նախագահական ժամանակահատվածից» «համագոյավորման ժամանակահատվածի» անցնելիս նախ «սոցիալիստ» նախագահ Ֆրանսուա Միտերանի իշխանության գալով՝ իր «աջակողմյան» խորհրդարանական մեծամասնությամբ, իսկ հետո արդեն 1977-2002 թթ. «աջակողմյան» նախագահ Ժակ Շիրակի ընտրվելով՝ իր «ձախակողմյան» խորհրդարանական մեծամասնությամբ և սոցիալիստ Լիոնել Ժոսպենի կառավարությամբ: Ավտորիտարիզմի պայմաններում կառավարությունը լիովին գերակայում է խորհրդարանի նկատմամբ, ավելին, նրան քննադատելն այնքան էլ անվտանգ չէ: Այդուհանդերձ, խորհրդարանը կենտրոնի և մարզերի կապը պահպանելու կարևոր մեխանիզմ է, «Օրենսդիրները» հանդես են գալիս իրենց ընտրողների պաշտպանների դերում և սուբսիդիաներ են կորզում բյուջեից:

Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի զարգացման օրինաչափությունները յուրովի վերահաստատվում են արևելաեվրոպական պառլամենտարիզմի իրավաքաղաքական պրակտիկայում, ժողովրդավարության և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման գործընթացներում:

Եզրակացություն

Մեր գնահատմամբ՝

1. Հենց ներկայացուցչական ու գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն են դրված խորհրդարանների դասակարգման հիմքում:

2. Կառավարության խորհրդարանական պատասխանատվության ինստիտուտը գոյություն ունի բոլոր խորհրդարանական հանրապետություններում և սահմանադրական միա-

[9] *Платон Фр.,* Исполнительная власть в Пятой Французской Республике, Логика и интерпретация. М., 2001.

պետություններում: Դրանց տարբերիչ կարևոր առանձնահատկությունը կառավարության ձևավորումն է խորհրդարանական հենքի վրա և դրա ֆորմալ պատասխանատվությունը խորհրդարանի առջև:

3. Գերիշխող խորհրդարաններն առաջատար դեր են խաղում քաղաքական կյանքում՝ ձևավորելով և խստիվ վերահսկելով գործադիր իշխանությանը: Այդ դեպքում անխուսափելի են դառնում հաճախակի կառավարական ճգնաժամերը:

4. Ինքնավար խորհրդարանները հուսալիորեն վերահսկում են օրենսդրական գործընթացը, սակայն չունեն «ծանրակշիռ» լծակներ գործադիր իշխանությանը հեռացնելու համար: Ինքնավար խորհրդարան կարող է ձևավորվել նաև խորհրդարանական համակարգի պայմաններում՝ զարգացած բազմակուսակցության հետ համագործակցելիս:

5. Սահմանափակ ինքնավարությամբ խորհրդարանը կարելի է դիտարկել որպես կառավարության և ընդդիմության սուր մրցակցության հիմնական դաշտ: Այստեղ վերահսկողության գլխավոր մեխանիզմը կուսակցական խիստ կարգապահությունն է:

6. Ենթակա խորհրդարանը համատեղելի է լիբերալ ժողովրդավարության և ավտորիտար կամ կիսաավտորիտար համակարգերի հետ:

Ամփոփագիր: Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի զարգացման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ինստիտուտը չի կարող արդյունավետ գործել, եթե ձևավորված չեն սոցիալական կառուցվածքն ու քաղաքացիական հասարակությունը, որոնց բնորոշ է բնակչության բարձր իրավաքաղաքական մշակույթը: Պառլամենտը խորհրդանշում և իրականացնում է ազգ-պետության, կամ որ նույնն է՝ ազգապետության քաղաքական ներկայացուցչությունը, ընդունում է պետության գլխի երդումը, ինքնիշխան ժողովրդի կողմից արտահայտում է վստահություն կառավարությանը, նրան հանձնում է լիազորություններ և այլն: Հենց ներկայացուցչական ու գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն են դրված գերիշխող, ինքնավար, սահմանափակ իրավասությամբ, ինչպես նաև ենթակա պառլամենտների (խորհրդարանների) դասակարգման հիմքում:

Annotation. Analysis of the practice of development of Western European parliamentarism shows that this institution cannot function effectively without a formed social structure and civil society, characterized by a high legal and political culture of the population. Parliament symbolizes and implements the political representation of the national state, or, what is the same, the nation-state; accepts the oath of the head of state; expresses confidence in the government on behalf of the sovereign people; transfers powers to it; etc. According to the author of the article, it is the features of the relationship between the representative and executive authorities that underlie the classification of parliaments into dominant, autonomous, limited-power, and subordinate.

Аннотация. Анализ практики развития западноевропейского парламентаризма показывает, что данный институт не может эффективно функционировать без сформированной социальной структуры и гражданского общества, характеризующихся высокой правовой и политической культурой населения. Парламент символизирует и реализует политическое представительство национального государства, или, что то же самое, нации-государства, принимает присягу главы государства, выражает доверие правительству от имени суверенного народа, передает ему полномочия и т.д. По мнению автора статьи, именно особенности взаимоотношений представительной и исполнительной властей лежат в основе классификации парламентов на господствующие, автономные, ограниченно-властные, а также подчиненные.

Բանալի բառեր *- Սահմանադրություն, քաղաքական կուսակցություններ, խորհրդարան, պառլամենտարիզմ, կառավարություն, ընդդիմություն, կուսակցական համակարգ, սահմանադրական վերահսկողություն, քաղաքացիական հասարակություն:*

Keywords: *Constitution, political parties, parliament, parliamentarism, government, opposition, party system, constitutional control, civil society.*

Ключевые слова: *Конституция, политические партии, парламент, парламентаризм, правительство, оппозиция, партийная система, конституционный контроль, гражданское общество.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Крылова Н.С., Британский парламент// очерки парламентского права. М., 1993.
2. Баренбойм Н.Д., Вето президента США-Советское государство и право, Москва, 1977.
3. Из истории европейского парламентаризма. Франция. Под ред. С.П. Пожарской. М., 1999.
4. Крутослов М.А.., Ковлер. А.И., Парламентское право Франции.-Очерки парламентского права, М., 1993.
5. Рокар М., Трудиться с душой, М., 1990.
6. Алмонд Г., Пауель Дж., Стром К., Далтон П., Сравнительная политология сегодня, Мировой обзор.
7. Холодковский К.Г., Парламент первой республики: Положитеельный и отрицательный опыт, М., 2004.
8. Кулакова Т.А., Теория самостоятельного мандата и принцип разделения властей на примере скандинавских стран // ПОЛИТЭКС. Политическая экспертиза. Альманах Вып, СПб, 2005.
9. Платон Фр., Исполнительная власть в Пятой Французской Республике. Логика и интерпретация. М., 2001.

Մանուկյան Մ. - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի մոնիտորինգի պատասխանատու, Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլհասցե՝ martin_manukyan_1955 @ mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 03.04.2025 թ., տրվել է գրախոսության 03.04.2025 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.: